ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 147

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ինչպես նաև Կորյուն Ղազարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Կորյուն Ղազարյանի դիմումը և տալ նրան նախագծման թույլտվություն:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել Նոր Երզնկայի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Լ. Խուրշուդյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 148

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նոր Երզնկա համայնքի բնակիչներ Արամ, Ալինա Հարությունյանների և Ջուլետա Մազմանյանի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 17/1 հասցեում ինքնակամ կառուցված տնտեսական շինությունը և պարիսպը:
Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 17/1 հասցեում 2003 թվականին իրականացրել են շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել են 23.03 քմ. տնտեսական շինություն և 3.21 ք.մ. պարիսպ:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի13-րդ մասի, բ) կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 17/1 հասցեում 23.03 քմ. տնտեսական շինությունը և 3.21 քմ պարիսպը կառուցվել է 2001թվականի մայիսի 15-ից հետո, ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք *որոշում եմ* .

1.Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 17/1 հասցեում 23.03 քմ. տնտեսական շինությունը և 3.21 քմ պարիսպը համարել օրինական:
1) Սույն որոշման օրվանից 60-օրյա ժամկետում Նոր Երզնկա համայնքի բյուջե պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաշվարկված 33063(երեսուներեք հազար վաթսուներեք) ՀՀ դրամ օրինականացման վճար (23.03 x 6000 x 0.21=29018 , 3.21 x 6000 x 0.21=4045):

2) Իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Խուրշուդյանի վրա:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գրիգոր Մարդոյանը:
5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____

գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 149

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նոր Երզնկա համայնքի բնակիչներ Արամ, Ալինա Հարությունյանների և Ջուլետա Մազմանյանի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 4-րդ շենքի 17 հասցեում ինքնակամ կառուցված բնակարանը:
Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 4-րդ շենքի 17 հասցեում 2001 թվականի նոյեմբեր ամսին իրականացրել են շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել են 50.37 քմ. բնակարան և մեկ ինքնակամ բացված պատուհան:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի 32-րդ մասի, ա)կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 4-րդ շենքի 17 հասցեում 50.37 քմ. բնակարանը և մեկ ինքնակամ բացված պատուհանը կառուցվել է 2001թվականի մայիսի 15-ից հետո, ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք *որոշում եմ*.

1.Արամ, Ալինա Հարությունյաններին և Ջուլետա Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Երզնկա համայնքի 6-րդ փողոցի 4-րդ շենքի 17 հասցեում 50.37 քմ. բնակարանը և պատուհանը համարել օրինական:

1) Սույն որոշման օրվանից 60-օրյա ժամկետում Նոր Երզնկա համայնքի բյուջե պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաշվարկված 33833(երեսուներեք հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ օրիկանացման վճար (50.37x3000x0.21=31733, 1x2100=2100):

2) Իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Բնակարանի տակ գտնվող հողամասը հանդիսանում է ամբողջ շենքի բնակիչների ընդհանուր համատեղ սեփականությունը:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Խուրշուդյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գրիգոր Մարդոյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____

գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 150

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նոր Երզնկա համայնքի բնակիչներ Գրիգոր, Ֆենյա, Արբակ, Մարիամ և Արփինե Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,26 հա հողամասի քարտեզագրման արդյունքում նրանց պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.2715 հա (07-050-0106-0040 կադաստրային ծածկագրով): Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0115 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչնդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Գրիգոր, Ֆենյա, Արբակ, Մարիամ և Արփինե Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-050-0106- 0040 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,2715 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժմանը պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 151

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նոր Երզնկա համայնքի բնակիչներ Հակոբ Մարտիրոսյանին և Գայանե Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 0,27 հա հողամասի քարտեզագրման արդյունքում նրանց պատկանող հողամասի մակերեսը կազմել է 0.2997 հա (07-050-0106-0041 կադաստրային ծածկագրով):
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0297 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչնդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Հակոբ Մարտիրոսյանի և Գայանե Հարությունյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 07-050-0106-0041 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,2997 հա հողամասի նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԱԳԿ միասնական ստորաբաժմանը պետական գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Նոր Երզնկա